

ԿՈՒՈՏ “ԱԹՈՌԱՎԱՆԼ ԵՒ ՎԷՔԻԼ” ԵՐՈՒ- ՍԱՂԷՄԻ

Երկա՛ր, շատ երկար է պատմութիւնը այն դէպքերուն ու դէմքերուն, որոնք երեւան եկան Պոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարքական աթոռներուն միացումովը:¹

Թէ ինչո՞ւ միացուցած էին այս երկու աթոռներուն պատրիարքութիւնը՝ իրաւ որ շատ որոշ չէ. ինչ որ որոշ կերպով կարելի է ենթադրել մէկ կողմէն սա է. Պոլսի պատրիարքները ահագին գումարներու պէտք ունէին ծախսելու համար. վասն զի կաշառով կ'զնուէր Պատրիարքութիւնը. այսպիսի ծախքերու համար Սուրբ Յակոբայ դանձարանէն հարուստ տեղ մը ո՞ւր պիտի գտնէին: Հաննէի դիտողութիւնը թէ՛ որքե՞ր եւ ինչպիսի՞նք հովիւներու փառամոլութիւնն ու շարաշահութիւնը պատճառ եղած է այսպիսի միաւորութեան մը շատ ճիշդ է: Թէեւ միւս կողմէն գիտենք որ Աւետիք

1 Երուսաղէմի պատմիչը, Յովհաննէս Արդ. (արարերէն Հաննէ), ակնատես եւ գործակից կոլոտի եւ Շղթա-յակրի, ժամանակի դէպքերուն գլուխ մը նուիրած է իր պատմութեան մէջ. “Յաղաքս ոնցեցն ոնցելոց է վերայ որքոց Երուսաղէմի Աթոռոյն Քրիստոսի” խորագրին տակ, որ Երուսաղէմի պատմութեան ամենէն արժէքաւոր մասն է, իբր միակ եւ հարազատ աղբիւրը ժամանակակից դէպքերու:

Հաննէի գործը հում նիւթերու հաւաքածոյ մըն է, անհարթ լեզուով մը գրուած. թուրքերէնի ալ վերածուած է: Հայերէնը երէ՛տ անգամ լոյս տեսաւ: Մեր գործածածը 1782ի, այսինքն՝ երբորդ տպագրութիւնն է: Մեր յիշած գլուխը կը գրուէ 101-157 էջերը: Կոլոտի յիշատակարանն ալ կը համառօտէ այս խնդիրները: Այս երկու աղբիւրն ալ կը գործածենք պատմութեան ընթացքին մէջ: — Երանի թէ Երուսաղէմ բանասիրութեան արդի պայմաններու համեմատ նոր տպագրութեամբ մը կենդանացնէր Հաննէի պատմութիւնը, մասնաւորապէս լեզուն կոկիլով եւ ծանօթագրելով: